


ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ

ՎԼՆԻՍԻԿ



ՊԵՏԱՆԿ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ

DIREN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՎԱՆԴԵՍ . ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ.

Ե. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 14 ՇԱՐԱԹ 1901

ԹԻԻ 219

ԿՐՕՆ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Արտասահմանի, բայց մանաւանդ Պուլկարիայ մէջ տխուր համբաւի մը տիրացած է այս անունը: Կրնայ ըսուիլ որ 96ին Պոլսէն Պուլկարիա եկած տասն հազար գաղթականներուն մէջ մէկ հատիկն եղաւ անիկա այդ տեսակ համբաւով մը նշանաւոր: Պոլիս ալ քիչ շատ ազմուկ հանած էին իր շահատակութիւնները. բայց Պոլիս մեծ տեղ է. գաղթակցալից արարքները կը կորսուին անոր մեծութեանը մէջ. մինչդեռ Պուլկարիա, խաղաղ ու անժխոր տեղ մը, էն փոքր զարտուղութիւններն իսկ ժխոր կը հանեն և ուշադրութիւն կը գրաւեն: Եւ հինգ տարիէ ի վեր Կրօն Միքայէլեանի զարտուղութիւնները մեծ եղան, շատ մեծ: Պուլկարահայ թերթերը, ուրիշ խնդիրներու մէջ տարակարծիք և իրարու հակառակ, այս տխրահամբաւ պարոնին արարքները ձաղկելու համար միաբերան ու համամիտ գըտնուեցան:

Դեռ երկու օր առաջ, տեղական թերթ մը կը ծանուցանէր թէ, այդ մարդուկը, որուն համար կըսուէր թէ իր անհատնում պարտքերը ձգքած փախած է, Ռուսմանիա գացեր է տեղացի հայ հարուստները իր յաւիտենական հնարքներուն մէջ ձգելու համար:

Նոր և անլուր չարաչահութեան մըն ալ առաջը առնելու համար, կոչում կընենք Ռուսմանիոյ տեղացի և գաղթական մեր ազգակիցներուն որ դրամ հաւաքելու համար Ռուսմանիա այցելող Կրօն Միքայէլեանի ըլլոր ձեռնարկները կասեցնեն և չեղան աւազելի բարեմտութեամբ մը դրամ տան զանազան սուտ նպատակներու համար: Կը ծանուցանենք մեր Ռուսմանահայ եղ-

բայրներուն թէ այդ մարդը որ առկէց երեք ամիս առաջ դպրոց մը ունէր հոս, Վառնայի մէջ, իր կիներ Օտեսա զրկեց և տեղւոյն մէկ քանի հարուստներուն մէջ որբերու աւուներ շահագործել տալ սկսաւ. 300 լուպլիէն աւելի չկրցաւ ձեռք անցընել, վասն զի գործը իմացուած էր և հաւաքչուհին ստիպուած էր առնել քալիլ Օտեսաէն. Կրօն Միքայէլեան այդ գումարը ստանալուն պէս գոցեց դպրոցը, որպէս զի որբի անուամբ հաւաքուած սոյն գումարը իւրացնելով խեղճ ուսուցիչներուն ունեցած հարիւրաւոր ֆրնքի պարտքը չվճարէ:

Հիմակ, Պուլկարիաէն և Ռուսիաէն յոյսը կտրած, վասն զի Արգոսի աչքեր կը հսկեն իր վրայ, ինքզինքը Ռուսմանիա նետած է՝ շարունակելու իր ազգանուէր (?) գործը:

Այս լուրը հաղորդող թերթը կըսէ թէ Կրօն Միքայէլեան թէպէտ չի կրնար հաստատութիւն մը վարել, սակայն կարող է վարձուած վարժապետ մը ըլլալ: Սխալ է տիկա: Այդ մարդը և ոչ իսկ վարձուած վարժապետ կրնայ ըլլալ: Մոռցուեցան իր դպրոցին մէջ՝ իր ջղագարային տաղնապաներու միջոցին՝ չարաչար ծեծած տըղաքները, որոնք բարեբախտութեամբ ողջ են մինչև հիմա և որոնցմէ երկուքը, գիշերօթիկ, իսկոյն հեռացան այդ միջոցներէն քովէն: Մոռցուեցաւ իր դպրոցին վարժուհի օրիորդին — որուն պարկեշտութիւնը, համեստութիւնն ու պարտաճանաչութիւնը ամենուն ծանօթ են, — գլխուն քար մը զարնելու ուզելու վայրագութիւնը, որովհետեւ օրիորդը իր մեծաքանակ առնելիքէն ֆրանք մը խնդրած էր: Մեր գիտցածը այն է որ վարժապետ մը պաղարիւն և իր թափերը զսպելու կարող պէտք է ըլլայ: Այս մարդուն քով բացարձակապէս կը պակսի այդ անհրաժեշտ յատկութիւնը: Մոռցուեցաւ վերջապէս 98ին, տեղւոյս

Ազգ. վարժարանին վիճակաբաշխութեան հանգէսին մէջ հոգաբարձութեան երեսին թքնելու իր զգուշի արարքը, այն հոգաբարձութեան որ իր շարլաթանի ձեւերէն ու խօսքերէն խաբուելով իրեն 12 ոսկի ամսական տալու բարեմասութիւնն ունեցած էր:

Ուստի կը յորդորենք մեր Ռուսմանհայ ազգակիցները որ ոչ միայն իր այցելութեամբը զիրենք անհանգիստ ընող այդ մարդուն մեղրածորան լեզուէն խաբուելով սանգիւ մը իսկ վրատահին անոր, այլ և զգուշանան իրենց վարժարաններուն մէջ ու և է մեծ ու փոքր պաշտօն վստահելէ այդ անձին:

Այս յորդորը ընելէ ետք մենք մեր պարտքը կատարած կը համարինք: Միայն կը շարմանանք որ տեղւոյ ազգ. իշխանութիւնը, որ շատ մօտէն տեղեակ է յիշեալ տխուր մարդուն անօրինակ գործունէութեանը, չի փութար ձեռք առնել այնպիսի միջոցներ որոնցմով կարելի ըլլայ վերջ դնել անոր այլանական ընթացքներուն:

Սակայն, կը սիրենք յուսալ որ տեղւոյ թաղ. խորհուրդը ալ այս անգամ իր պարտականութիւնը պիտի կատարէ այդ մարդուն հանգէս:

ՔԱՐԵՆԻՆԵՐ

Զմիւռնիոյ ազգայիններէն Չաքրեան Յովհաննէս անուն անձը՝ խանի մը մէջ ունեցած երկու սենեակները, նոյնպէս կարնեցի Մանուկ անուն ազգայնոյ մը կինը Վարդուհի ու աղջիկը Մարիամ՝ իրենց սեպհական մէկ տունը և անոր յարակից երեք խանութները Զմիւռնիոյ ազգ. հիւանդանոցին նուիրած են:

—Արեւելեան Մամուշ ամսաթերթի արտօնութիւնը կայս. իրատէսով փոխանցուեր է հանգուցեալ Մ. Մամուրեանի որդւոյն՝ Հրանտ Մամուրեանի անուն:

—Աւասիկ Հայաստանեայց եկեղեցւոյ կրօնային ներողամտութեան փայլուն մէկ ապացոյցն ալ: Թէև ողբերգակ Ադամեան Հայ—հռոմէական դատանութեան մէջ ծնաւ ու մեռաւ, բայց մեր եկեղեցիք միշտ Հայաստանեայց եկեղեցւոյ զաւկի մը պէս օրհնած են անոր յիշատակը, և հոգեհանգիստներ կատարած են ամենուրեք: Ամենէն աւելի աչքի զարնող պարագան Երևանէն

կը ծանուցուի, այսինքն թէ Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին օրը, Ս. Հայրապետին ներկայութեանը, Խորվիրապի Վանքի եկեղեցիին մէջ հոգեհանգիստ կատարուած է Ադամեանին համար: Ս. Հայրապետն ինք օրհներ է հանգուցեալ մեծանուն գերասանին յիշատակը: Ներկայ գրտնուեր են Բագուի բոլոր հայ գերասաններն ու գերասանուհիները, որոց խնդրանքը կատարուած է այս հոգեւոր պաշտօնը:

Պ. . . քաղաքէն մեզ կը գրեն:

«Տեղւոյս նոր հոգաբարձութիւնը կազմուած է հետեւեալ անձնաւորութիւններէ. Վ—կը Գրիգոր, Չ—է Գրիգոր, Ե—ճի Գրիգոր և Չ—ճի Գրիգոր: Արդ, հինգերորդ Գրիգորի մը իբր օգնական պէտքը զգացուած ըլլալով, Պ. Բոժոժիկի կը դիմենք և կը խնդրենք որ հաճի սոյն հինգերորդ Գրիգորը հոն գտնելով մեր կողմը ուղարկելու ձանձրութիւնը յանձն առնել: (*)

Թէև հոս կայ մէկը դապազ Գրիգոր անունով, զոր սոյն չորս Գրիգորներէ կազմուած հոգաբարձութիւնը առ ի չգոյէ մտային գրամագլխի (վերնատունը պարապ է) կը փափագի իր մէջ առնել իբր օգնական, բայց մշտնադիտւած սէր մը ըլլալուն համար ընդունելի չէ գտնուած: Ծիլիպեցի

(*) Բոժ.—Հոս Տուրպախ Գրիգոր մը ունինք, կուզէք նէ կը շրկենք:

Կախարդանոց Տերպապաներ

Այս ալ պիտի լսենք ելեր:

Պրուսայէ կը գրեն «Բիւլանդիոն»-ի. — «Անցեալ շաբաթ տեղւոյս առաջնորդ Արշարունի օրըրազան եպիսկոպոսական մատանին կորսնցուցեր է. Առաջնորդարանին մէջ մեծ իրարանցում կար և Սրբազանն շատ յուզուած էր: Քահանաներն ալ իրար անցան և մատնին գտնելու համար գացին գիմեցին. . . կախարդի մը: Պէտք է գիտնալ որ հոս կախարդներու և վհուկներու մեծ կարեւորութիւն կուտան: (Բոժ.—Որովհետեւ «Իսամ էօքսիւրինճէ» ճէօմասթ տա գուսար» կըսէ թուրք առածը) Կախարդը պէտք եղածն ընելէ վերջ, բամպակի կտոր մը կուտայ քահանաներուն և կը պատուիրէ որ այս բամբակն Առաջնորդին ականջին մէջ դնեն, ապահովցնեն:

լով զանոնք որ այս բամբակին շնորհիւ գիշերը
գողը պիտի գայ և Առաջնորդին ականջին պիտի
յայտնէ ինքզինքը: Քահանաները բամբակը
կառնեն կը բերեն և շատ կաշխատին որ Սըր-
բազանն համոզեն, բայց Սըրբազանը չի բռնէ կը
վռնտէ: «Իմ ֆնատ չի՞ բաժնի, կըսէ, և կուզէք
զիս ծաղրածանակ ընել աշխարհի:» Հիմա մատ-
նին չգտնուեցաւ դեռ, բայց չի գիտցուիր թէ
Սըրբազանը բամբակն արհամարհելուն համար չը
գտնուեցաւ թէ գողը շատ վարպետ ըլլալուն:
Ըսողներ ալ կան թէ Սըրբազանը շատ զգլացեալ է
քահանաներուն խրատին չհետեւելուն համար:
Իսկ վերջն ալ ատեն անցաւ կարելի է բամ-
բակը ոլթը կորսնցուց:»

ԷՐԻԿ ԽԱՐԳԵՐՈՒ ԱՌԱՋՆԱԾՆՈՐՀՈՒՄԸ

Բարիչի հարուստ գործարանատէր Տիւլէի
գործաւորներն մէջ մէկ քանի տարիներէ ի վեր
երիտասարդ գրագիր մը կը պաշտօնավարէր, ո-
րուն վարկէն և աշխատասիրութենէն տէրը
այնչափ գոհ էր մնացեր որ, թոյլտուութիւն
տաւած էր անոր, իր բնակարանն ալ յաճախել
ազատութիւն: Պարոն Տիւլէն այրի ըլլալով, միակ
աղջիկ զաւակ մը ունէր. Օր մը իր երիտասարդ
գրագիրը կը կանչէ ու կըսէ անոր.

— «Ի՞նչ երիտասարդ էք, աշխատասէր ու
պատուաւոր, աղջիկս Միմի, որ 17 տարեկան է
և գեղեցիկ, սիրահարած է Ձեզ: Նա իր հան-
դուցեալ մօրմէն արգէն 100,000 ֆրանք ունի,
եթէ կը փափագիք յառաջիկայ Մայիսին կրնանք
Ձեր հարսնիքը կատարել:»

Երիտասարդը—Էրնէսթ Լամոթ— բոլորովին
գոյնը նետած կը հարցնէ տիրոջը «—Ի՞նչ մին,
չեւ հիմա ինձմէ գոհ մնացած էք:»

— Շատ գոհ եմ, — կը պատասխանէ գործա-
րանատէրը, դուք ամեն ատեն, խղճի մտք եւ
պատուաւոր կերպով վարեցիք ձեր պաշտօնը:

— Քանի որ այդպէս է, ևս իմ ապագայիս
համար որչափ որ ալ անտարբեր մնալ չեմ ու-
զեր, բայց և այնպէս Ձեր փեսան ալ չեմ կըր-
նար ըլլալ...

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ ես աղջիկ եմ, անունս ալ ոչ
թէ, Էրնէսթ ալ Էրնէսթինա է:

Աւելորդ է ըսել թէ գործարանատէրը ասի-
կայ լսելուն պէս մէկէն ի մէկ փայտ կը կտրի,
ու երբ քիչ մը վերջը ինքզինքին կուգայ, կը
հարցնէ.

— Ուրեմն ի՞նչ պատճառ ունէիք այս հա-
ղուտներուն մէջ պահուելու:

— Որովհետեւ, կը շարունակէ օր. Էրնէսթ-
թինա, թէպէտեւ վաճառականական դպրոցը ա-

ւարտած էի ու կատարեալ հմտութիւն առած
պաշտօնիս վերաբերմամբ, բայց և այնպէս իբրեւ
կին մարդ, երբէք և ոչ տեղէ մը 40 ֆրանքէն
աւելի ամսաթոշակ մը չկըցի ստանալ, մինչդեռ
իբրեւ էրիկ մարդ, ահաւասիկ դուք երկու տա-
րիէ ի վեր 250ական ֆրանք ամսաթոշակ տալե-
նէդ զատ, Ձեր պաշտելի Միմին ալ կառաջար-
կէք ինձի:

— Ուրեմն, շարունակեց պարոն Տիւլէ, քա-
նի որ դուք սիրական պատճառաւ աղջկանս Մի-
մինն ամուսին չէք կրնար ըլլալ, գէթ շնորհ ը-
րէք, նորա մայրը ըլլալու:

— Պէտք է մտածեմ ասոր վրայ ալ, պատաս-
խանեց երիտասարդուհին Էրնէսթինա:

Թարգմ.

Թ.

Կ Ս Մ Ի Թ

ՄԱՐԻՉԱ ԳԵՏԻ ՄԱՅԹԱՊՃԻ ԶԻՊՊԵՒՆ

Փոստի մը կտոր թուշիկէդ կախած.

Սիւլիւկ պըյրիններ դէպի վեր տնկած.

Ճափի կտոր մ'ալ աչքիդ փակցունես,

Իրեք զիւպպէին դօմանտան դուն ես:

Կնկանդ փարայով կը հաղնիս բալթոն.

Անոր աւժաթով շինած ես պատօն.

Ու խօսքի պէս հըր սօխախ կ'ելլաս.

Աշխարհք կըսէ քի «ծախուած մարդն է աս»:

Կնկանդ փարայով կ'ուտես կը խմես,

Անոր սայէէն սիւս տիւղէն կընես.

Ու չաճչնալով, ո՞վ չորսնոց զիւպպէ,

Անցնող դարձողը մայթապի կ'առնես:

Դուն կը նմանիս սօպայի թէբէ

Որ ֆըրֆըր դառնայ ամեն մէկ հովէ.

Ամեն բանի մէջ քիթդ կը խոթես.

Յախաթ պարզերես մէջէն դուրս չելլես:

Քեզի պէս չորսնոց իրեք զէվզէկներ.

Թաքաւին խաճէն իրար էք եկեր.

Եկող գացողին խուլք մը կ'ույտուրէք.

Սաթներով ձեզ էլէնճէ կընէք:

Ինչ կ'ուզես ըսէ, ինչ կ'ուզես ըրէ.

Ինքզինքդ հիշ մի՛ սեպեր մարդէ.

Տուն երթալուդ պէս խառնախօսին մտնաս.

Կնկանդ դէմը կատու կը դառնաս:

Ան՝ քու էրիկդ է, դուն՝ անոր կնիկ.

Խօսքէն ելլաս նէ՛ լմացաւ տարիդ.

Աս վիճակիդ մէջ «մարդ եմ» որ ըսես.

Վայ քեզ պուտալա, դուն քեզ կը խաբես:

Մարիճա գետ

Նալընը Բրաք

ԶԱՆԱԶԱՆՔ

ԳՆՁՈՒՆԵՐՈՒ ԿԱՐԱՒԱՆԸ

Անցեալ շաբաթու Բարիչի շրջանակներէն մէկուն մէջէն անցաւ երկարաձիգ թափոր մը գնչուներու 15 խոշոր սայլերով, որոց վաթսուն ձի լծուած էին. Սայլերուն ետեւէն ալ կուգային կարգաւ արջերու վոհմակ մը, կապիկներու երամակ մը և բազմաթիւ շուներ, ամենուն առջեւն ալ պղնձագէտ գնչուներ, պարզ շապիկներ և անդրափարտիկներ միայն հագած. Թաղին բնակիչները դուրս թափեցան տարօրինակ տեսարանը դիտելու. Գնչուական կարաւանը վերջապէս հասաւ Բարիչի պարագէն դուրս մարգագետին մը, ուր հաստատեց իր բանակետը. որուն շուրջ բերանաբաց հաւաքուեցան հազարաւոր միամիտ Բարիչիներ. Ոստիկաններուն հարցման գնչուներուն գլխաւորները պատասխանեցին թէ երկու տարբեր ցեղի մարգիկ են իրենք որ Ֆրէն քաղքէն էգամբ կերթան. Գնչուներն իրենց սովորութեան համեմատ փռուեցան գետինը՝ յատկապէս պատրաստուած վաշերուն ներքեւ երբ պատահեցաւ զուարճալի դէպք մը. Բազմութեան մէջէն մին գեղեցիկ ձի մը տեսնելով կարաւանին մէջ, հարցոց գնչուներէն մէկուն թէ ծախու էր. «Քառասուն ֆրանքի կուտանք» պատասխանեց գնչուն. Սակաւկութիւնը լմնալու վրայ էր, երբ ոստիկան մը միջամտեց գիտել տալով թէ այդ ձին առնուալն 60 անդլ. ոսկի կարծէր, հետեւաբար գողցուած պէտք է ըլլայ. Եւ հրամայեց որ ամենքն ալ պահականոց գան իրեն նսեւէն. Եւ ահա ծանր կարաւանը սկսաւ նորէն կազմակերպուիլ. Կիներըն ու տղաքները դարձան հսկայ սայլերուն մէջ, արջերը, կապիկները շուներն իրենց տեղերը բռնեցին. 5000 հետաքրքիրներ ալ անոնց ետեւէն, ուղղակի դէպ ի պահականոց. փողոցներու բնակիչք իրենց տուններուն կամ խանութներուն պաշտպանութեան համար ոստիկաններուն օգնութիւնը խնդրեցին, այդ բանակէն սարսափաւոր ըլլալով. Պահականոցին մէջ քոմիտէին առջեւ կարգ մը թուղթեր հանեցին, ապացոյցանոյ որ թէև անոնք թափառաշրջիկ էին աշխարհի վրայ, բայց պարկեշտ մարդիկ էին. կարաւանը նոյն ճամբաներէն դարձաւ իր բանակետը.

ՎԱՇԻՍՏՈՒՅԻՆ ՀԱՐԱՏԻ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Հարց — Ո՞վ շինեց քեզի.
Պատ. — Ես շինեցի ինքզինքս.
Հ. — Ի՞նչպէս շինեցիր ինքզինքդ.
Պ. — Խաբեբայութեամբ, կեղծարարութեամբ և ուրիշ չար գործերով.
Հ. — Ոսկիին կը հաւատաս.
Պ. — Այո՛, բոլոր խելքովս ու մտքովս ոսկիին կը հաւատամ ու բոլոր սրտովս կը սիրեմ զայն.
Հ. — Ինչո՞ւ համար ոսկիին կը հաւատաս.
Պ. — Որովհետեւ ան ինծի կը բերէ այն պատիւն ու յարգանքը որոնց տիրանալու համար նկարագիրս, հանճարս ու անձս չի թոյլատրեր ինծի.
Հ. — Որո՞ւն պէտք է աւելի հոգ տանիս, գըրամիդ թէ հոգիիդ.
Պ. — Գրամիս. որովհետեւ առանց անոր ո՛չ զօրութիւն, ո՛չ գիրք, ո՛չ բարեկամ և ո՛չ ալ հաճոյք պիտի ունենամ.
Հ. — Ի՞նչ է հաւատքը.
Պ. — Հաւատքը առանց տարակոյսի հաւատալն է թէ՛ ինչ որ ուզեմ կրնամ ընել գրամովս.
Հ. — Ի՞նչ է յոյսը.
Պ. — Յոյսը ամուր վստահութիւն մըն է թէ մեր Անօրէնութիւնները այս աշխարհի մէջ չպիտի երևան ելնեն ու հանդերձեալին մէջ պիտի ներւին.
Հ. — Ի՞նչ է աղքատսիրութիւնը.
Պ. Աղքատսիրութիւնն է օգնել ուրիշներուն այնպիսի կերպով մը որմէ կարելի ըլլայ մեզ օգտուիլ.
Հ. — Մեր թշնամիները սիրելու ենք.
Պ. — Այո՛, քանի որ վտանգաւոր է ցուցնել թէ կատենք զանոնք.

Հայրենիք

Թարգմ. Մ. Գ. Ք.

Հետեւեալ գրքերը կը ծախուին Ա. Զարպ-հանէլեան գրատունը Վառնա.
Քերականութիւն Տօնէլեան Ա. տարի 75 Ս.
" " " " Բ. " 1. 10 "
" " " " " " 6. Ֆր.
Պատմ. Հայոց Պալասանճանի 8. "
Բառարան Գաղ. Հայ. Տաճ. 1. 20 Ս.
Պատմ. Հայոց համառօտ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏԵՍԱՐԱՆ ՄԸ

— Այս ժամօժու կուգան տուն, կերակուրը քսան անգամ կրակին վրայ դրի քառասուն անգամ վար առի:

— Լռէ՛, կնիկ, իմ հոգերս ինծի հերիք են:

— Ի՞նչ հոգ ունիս, մէյխանէն գնա ժամերով խմէ, անկէ ետքն ալ հոգեր ունի եղեր:

— Կնիկ, լռէ կըսեմ կոր:

— Բերանք ֆըշի կը հոտի կոր... լռելու եմ եղեր... էրիկ մարդոց ամէնն ալ տառնկ են... գինովալու համար միշտ սէպէպ կը գտնան: Յալոք աղան ամէն գիշեր գլտորելով տուն կը դառնայ ինչու... որովհետեւ խեղճը տասը զաւակի տէր է և յոսահաս փիճակի մէջ է: Կարապետ աղան ամէն օր գինով է: Ղալալըն չորս ամիս է պարսպ կը պտտի կոր: Էյ սա դուն ինչո՞ւ համար կը խմես կոր հինգ ամիսէ ի վեր:

— Այս գիշեր կռիւ ընել կուզես կոր:

— Հրամմեր ես, կռիւ կուզեմ կոր, ի՞նչ պիտի ըսես:

— Անգամ մը հարցուցի՞ր ինծի քի այսօր քանի՞ փարա վաստկեցար:

— Ի՞նչ ալ ինծի հարցուցիր՝ մի՞ այսօր ո՞րչափ յոգնեցար, փարա վաստկելդ չվաստկելդ ալ ես պիտի մտմտամ, փարա չես կրնար վաստկիր նէ՛ ինչու համար կարգուեցար, ես քուկին ձեռքէ՞ք քաշեցի, թող չկարգուէիր:

— Մի բարկացներ զիս:

— Փարա չես կրնար կոր վաստկիլ եղեր, փարան ալ լի է որ ես վաստկիմ նէ՛ տունին գործերն ես նայիմ նէ՛, ան ատեն ի՞նչ պէտք պիտի ունենամ քեզի:

— Դո՛նէ սա վիշտերուս մէջ խաղաղութիւնը պահել աշխատինք: Լռէ՛:

— Կանուխ եկուր ուրեմն:

— Գործի համար ուշ մնացի, Լռէ՛:

— Ձախտի լռեմ, քեզի շիտակ խօսք ըսեմ, փարա չվաստկող էրկան խօսքը չանցնիր, հասկցա՞ր մի, խօսքդ քաղեցնելու համար փարա վաստկելու ես, ժամանակին տունդ գալու ես, հէ՛մ առնօթի հէ՛մ ալ պէօպիւրլէնմիշ ըլլալ: աս չեմ կըլլեր ես: բան մ'ալ ըսեմ քեզի, թէ որ ինքզինքդ չշտկես, օր մը տունէն կը վռնտեմ քեզի:

— Կը վռնտե՞ս մի:

— Կը հարցունես մի՞... ես իմ բարայովս կրնամ չօճուխներս ապրեցունել:

— Կնիկ, կերեալ որ ծեծ ուտել կուզես կոր:

— Կուզես նէ՛ սանկ դպիր:

— Դպչիմ նէ՛ ի՞նչ կըլլայ եղեր:

— Ինչ խրտար ծան ունիմ նէ՛ եանկըն վար կը պոռամ:

— Ես ալ պիղիմ էվաէ տիր կըսեմ:

— Ձեմ գիտեր, իշտէ ասանկ:

— Աստուած համբերութիւն տայ ինծի:

— Հարկաւ պիտի տայ, քէօր կի՛նով տուն գալ անկէ վերջն ալ քէօշէ մը քաշուիլ խուկալ:

— Աստուանց դռնէն դուրս ելայ չելայ՝ պախալը գէ՛մս կայնեցաւ:

— Իրաւունք ունի մարդը, վեց ամիսէ կը խաբես կոր:

— Հաղիւ թէ հախաղեցի խօսք տալով որ քանի մը օրէն պիտի վճարեմ պարտքս և փողոցը դարձայ՝ հացագործը թէւէս քաշեց:

— Շատ աղէկ է ըրեր, աղէկ որ, երեսիդ ալ չէ զարկեր, իրեք ամիս է մարդը կը խաբես:

— Աս ալ լուրջեցինք:

— Աղօթք ըրէ որ լուրջուէր է:

— Եւ ասա տանտէրը օձիքէս քաշեց:

— Պիտի քաշէ ես, անոր տեղը ես ըլլայի նէ ականջէդ կը քաշէի:

— Սանկ կըլլայ, նանկ կըլլայ, քանի մը օր ալ համբերէ, բան մը կընենք Ալլահ քէրիմ, մենք մեր պարտքը կը ճանչնանք ըսելով ճամբեցինք:

— Շատ աղէկ մարդ է եղեր որ խօսքիդ հաւատացեր է:

— Վերջը չեկաւ որ, չե՛ս ըսեր որ կօշկակաւորն ալ գէ՛մս ելաւ:

— Կօշկակարին ստակները մինչեւ հիմայ չե՛ս տուեր:

— Ըսաւ որ...

— Երկու տարիէ ի վեր մարդը չօլուխիդ չօճուխիդ, ինծի, քեզի քառասուն չիթթ բօթին չինեց: տահա փարան չողուի՞ր: Աստուծմէ գլուխս:

— Ըսի որ քանի մը օր համբերէ, գալ շաբթու քեզի հինգ ֆրանք կուտամ:

— Աս ինչ քէփաղէութիւն է. վախ, վախ, վախ:

— Անկից կծիկը դրի, խանութս գացի եւ մինչեւ իրիկուն տասը փարայի առուտուր չըրի, ոչ միս կըցի առնել, ոչ հաց, ոչ ալ պանիր, բարեկամներուս գացի, քանի մը ֆրանք փոխ ուղեցի, բարեկամներս ալ չունէին որ տային, ասկէ վերջը դէյուութիւն եկաւ վրաս՝ մարելու պէս եղայ և գացի ծովեղերեայ խահուէն նըստայ, սիկարա մը խմեցի: Հասկցա՞ր հիմայ ուշ գալուս պատճառը:

— Հասկցայ:

— Ճամբան գալնիքէն կըսէի որ կնիկս խնդում երեսով դէմս պիտի ելլէ, թեալ պիտի մտնէ և զիս վերը պիտի նստեցնէ, դիմացս պիտի նստի, ինծի պիտի մխիթարէ:

— Հոգըս հատեր էր. ինծի ո՞վ մխիթարէ պիտի, դուն իմին խեղճութեանս պատճառ եղար: Բոլոր օրը աշխատէ. հոգիդ հանէ, իրիկուան ալ աղան մխիթարելու է եզեր. քէշկէ չը կարգուէի, տունը նստէի:

— Մտքէս կըսէի որ կնիկս դժբախդութեան կէսը վրան պիտի առնէ և ասանկով աէրտըս քիչ մը պիտի թեթեւայ:

— Ասլը բոլոր դժբախդութիւնն իմ վրաս է. դժբախտութիւն մ'ալ դուն ես:

— Կնիկս քիչ մը համբերէ, սա գործերս շտկուելուն պէս հանգիստ կեանք պիտի անցունենք:

— Անգիւրի աշխարհքը:

— Աս միւլազանարով տուն կուգայի. բայց մեր խորհածին հակառակը տեսանք:

— Ես ալ կըսէի որ էրիկս կանուխ պիտի գայ:

— Հը:

— Մէկ ձեռքը միս և ձուկ, միւս ձեռքը պըտուղ, թէին տակը մօտայ չափիս մը:

— Էյ . . .

— Տունէն ներս մտնէ, զիս քովը պիտի հըրամցնէ ու պիտի մխիթարէ ըսելով «Ի՞նչ ընենք, դուն ալ շատ կը հոգնիս կոր խուշիկս ամա, առաջ Աստուած, ես քեզի մէկ երկու պէս լէմէ պիտի բռնեմ, երկու աշծի պիտի բերեմ. քիչ մ'ալ աղուադ սլմէ՞ր. ի՞նչ գիտնամ ասոր պէս խօսքեր կսպասէի:

— Կնիկ, իրարու խօսք չալիտի կընանք հասկընալ:

— Հասկնալ չես ուզեր կոր քի հասկնալ:

— Ես կարծեմ թէ, օր մը չէ նէ օր մը գըլուխս առնեմ պիտի երթամ:

— Ես քեզմէ առաջ պիտի երթամ, չէ նէ իրիկունները կանուխ եկուր:

— Կանուխ գալը բան մը չէ:

— Սա օլին ալ մը խմեր գուրսը, հոս եկուր մէկտեղ խմենք, մէկ երկու գաւաթ ալ ես կը խմեմ:

— Հաշտուեցանք ուրեմն:

— Այո. քիչ մը ըսիսի կայ վերը խմե՞նք:

— Բեր խմենք: (Տիկինը կերթայ օլին կը բերէ):

— Միշտ ասանկ սիրով ապրինք, որ մեր տղաքներն ալ մեզմէ օրինակ առնեն:

— Մենք ալ իրարու գլուխ չպատուեցինք աս: Սիրելի էրիկս սա չապխաս չես մոռնար ես առնելու վաղը: Հացագործին մի՛ նայիր դուն, ան կսպասէ, չսպասէ տէ ի՞նչ պիտի ընէ, նը-

պարավաճառն ալ բաթլամիչ չեղաւ ես, տանտէրին ես խօսք կը հասկըցնեմ. բայց նայէ որ շաբաթս զօրհեյաները աշըխ բէմպէ ըլլան:

— Էօ՞Ք. հատ մ'ալ տուր խմեմ տէ, վաղը առտու կը խօսինք:

ՋՈՒԹԱԿ



Տարափոխիկ հիւանդութեամբ անկողին իյնող ամուսին մը իր վերջին վայրկեաններուն կինը քովը կան, չելով կըսէ:

— Չեմ ուզեր որ մէկը քովս գայ այլ ևս, բացի քեզմէ, որովհետեւ գիտեմ որ հիւանդութիւնս փոխանցիկ է . . .

Հայր և որդի:

Ծօ Ղեւոնդ, սա թուաբանութիւն կը սորվիմ կըսես կոր նէ, ըսէ նայիմ, տան անգամ տասը ի՞նչ կընէ:

— Հարիւր . . . հա աղէկ միտքս եկաւ, աս առտու պախալին առջեւ անցած ատենս մարդը ըսաւ քի, պայանս սէլամ սէջլէ հիսապ հարուր զրուշ օլտու, փարա կէօնտէրսին:

— Թէվէքէլի չէ քի ես քննութիւնէն հազ չեմ ըներ. մութլախ ծարը քէսէիս կը գպշի . . .

Հասուկ աղջկան մը հարցուեր է թէ ի՞նչ կարգի երիտասարդի հետ կուգէ ամուսնուելու:

Աղջիկը — Որք և այրիի հետ, որովհետեւ կնոջ յարգը մօտէն և փորձառաբար ուսումնասիրած է ան:

Երիտասարդ մը հարցուց իր մօրը:

— Մայրիկ, իւրիւսգոյս խօսին մէջ ափօգաթ կնիկը տեսա՞ր:

— Պէտք չունիմ. կստմեն օր ինքզինքս կը տեսնամ կոր տղաս . . . Ես չըլլամ նէ, հար ու տղայ իրար կ'ուտէք . . .

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (26)

ՌԷՆԷ ՏԸ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՊԱՐՄԻՐ-ՄԱՄՈՆԿԸ)

Աւաճ. միեջեւ այն տառն ճիշդ հակառակն էր եղած: Գժբախտ մանտարէնին ուտելու ու խմելու օտարժակը կը դողուէր, ինչ որ այդ մարդուն վրայ ամենախորին յուսահատութեան նշան մըն էր:

Երբեմն կէս գիշերին կարթննար, և իր աղաղակներէն վրայ հասնող ծառան կը տեսներ որ մանտարէնը սենեակին մէջ կը վազէր՝ բամակը ծռած, կարծես խուսափելու համար պամպուկի հարուածներէն: Գէթ այդպէս կը կարծէր իր մղձաւանջին մէջ: Եւ իրեն կը թըւէր թէ դահիճը հաճոյքով կը բաշխէր իրեն այդ հարուածները:

Խեղճ գատաւորը անագորոյն կենցաղ մը կը վաւերէր, կառչելով ամենափոքր նշանին, ուստի փութաց հրաման տալ որ ներս մտցունեն տիկին Լիուն, երբ իմացաւ որ իրեն հետ խօսիլ կուզէր:

Ջանաց սակայն վերստանալ իր բոլոր պաղարիւնը և իր բոլոր արժանապատուութիւնը՝ տիկինն ընդունելու համար:

Բայց Սօլ-Պրոտէի մայրը սովորական յարգանքներուն վրայ մտածելէ շատ հեռու էր: Մէնկին գիմացն ելլալուն պէս, և առանց հոգ ընելու բարտուղարն որ հոն կը գտնուէր, շիպ շիտակ նպատակին գիմելով ըսաւ.

— Գրէթէ ինծի շափ շահ ունիք Լէնկի սպանիչը գտնելու, այնպէս չէ:

— Հա՛րկաւ, պատասխանեց գատաւորը աշխուժով՝ Անշուշտ ձեզ շափ շահ ունիմ Լէնկի սպանիչը գտնելու: Նոյն իսկ ձեռնէ աւելի շահ ունիմ:

— Ինչիւրը զաւկիս ճեանքին վրայ է, դիտել տրւաւ տիկին Լիուն մեղմիւ:

— Եւ իմ ալ գատաւորի պատուոյս վրայ, պատասխանեց պաշտօնատարը անյուսալի պատրաստութեամբ թեամբ մը:

— Լա՛ւ ուրեմն, ես կը ծանշնամ մարդասպանը:

— Գը ծանշնա՞ք:

— Աղջիկս տեսաւ զայն:

— Ո՛ւր:

— Թաւնան դրան կամարին տակ, հիւանդանոցէն դռնալնուս, ուր կը մեռնի խեղճ Ի-թէն:

— Թաւնան դրան կամարին տակ: Եւ ձերբակալելի չտուի՞ք զայն:

— Մութին շնորհիւ դիւրաւ անհետ եղաւ:

Տիկին Լիուն այն տառն պատմեց իր աղջկան ըսածները մարդասպանին երեւանը վրայ:

— Եւ ո՞վ է այդ մարդը, այդ թշուառականը:

— Ֆուլն-Սիի հին դրացիներէս մէկն է, Ձու անունով մտաւաճառ մը:

— Ձու: Կեցէ՛ք, այն զոր ստամբակները Կարմիր-Մամոնկ կանուանէին:

— Նոյն ինքն:

— Բայց այն տառն բերքինս, գուշակ մը, կախարդ մըն է: Իսկ ես ապուշ մըն եմ:

Աւելորդ է ըսել թէ Մէնկ այս վերջին խօսքը մեկուսի ըսած էր:

— Ձեմ հասկնար:

— Օ՛հ, ես կը հասկնամ: Այդ մարդը ձեր աղջկան նշանտուրին տառնը հեռացա՞ւ Ֆուլն-Սիէն:

— Գրէթէ այդ միջոցին: Երեք ամիսէն աւելի է որ խանութը գոց է:

— Օրորոգ Լիուն-Սիուն կը սիրէր և նախանձութեամբ սպաներ է անոր ամուսինը:

— Այժմ ապահով եմ այդ մասին:

— Հիմա կ'ընէր գտնալու է:

— Քանի որ կէս ժամ առաջ քանդոն կը գրտնուէր, հեռու ըլլալու չէ:

— Շիտակ է: Անպատճառ խելքս գլխէս գացած է: Լսեցի՞ք, Թէնկ-Թունկ:

Այս խօսքերը կուղղուէին բարտուղարին որ ներկայ էր հոն:

— Լսեցի, Տէր, պատասխանեց գրագիրը խոնարհարար, ի՞նչ ընելու է:

— Ֆո-Հօրն երթալ գտնելու է:

Թէնկ-Թունկ քայլ մը առաւ դէպ ի դուռը:

— Կամ թէ, ոչ, ես անձամբ կերթամ, յարեց նախագահը, զարնելով ծնծղային վրայ սրով իր ծառաները կը կանչէր:

Անց հատ ծառաներ ներկայացան անմիջապէս:

— Շո՛ւտ, գահաւորակս և ամենէն տոկուն գահաւորակիրներս, հրամայեց Մէնկ:

Եւ սկսաւ քալել մրմալով:

— Ձու, մտաւաճառ, Կարմիր-Մամոնկը: Միայն թէ շատ ուշ չըլլայ:

Հինգ վայրկեան հազիւ անցած էր երբ եկան ծանուցին թէ մարդիկը պատրաստ էին :

— Գահաւորակ ունի՞ք, տիկին, հարցուց այցելու-հին :

— Այո, պատասխանեց տիկին Նիու :

— Ուրեմն ինծի հետեւեցէք՝ ոստիկանութեան վերատեսչին տունը կերթանք : Վայրկեան մը կորսնցնելու չէ :

Եւ խոշոր Մէնկ, որ երիտասարդական աշխոյժ մը կը ստանար պամպուկի հարուածներէն զերծ մնալու յոյսէն, իր գահաւորակը ցատքեց :

Գահաւորակիրները բեռան տակ կրեցան, բայց եւ այնպէս արագաբայլ ճամբայ ելան :

Տիկին Նիուի գահաւորակիրներն ալ վար չմնացին : Ուստի, թէեւ երկու հոգի էին միայն և բաւական երկար ճամբայ մը ըրած, ծանրամարմին մանտարէնին հետ հասան :

Սա ձեռքը կնամեծարութեամբ խեղճ կնոջ երկարեց և ֆո—Հօբի գրասենեակը բաշեց տարաւ :

Մէնկ բանի մը խօսքով իմացուց անոր՝ Թաէնան զրոյն կամարին տակ եղածը :

— Եթէ այդ մարդը մինչեւ ժամը մէկ հեռացած չէ բաղաբէն, չպիտի կրնայ գուրս ելլալ, կը խոստանամ, ըսաւ ոստիկանութեան տեսուչը :

— Ինչպէս պիտի ընէք :

— Այն պատրուակով թէ շրջականերուն մէջ գիտագործներ երևան ելած են, քանզոնի բոլոր դռները գոյ պիտի տամ :

— Շատ աղէկ :

— Եւ հրաման ղրկել նաւահանգիստի հրամատարին որ շղթաները բաշէ, որպէս զի ոչ նաւ կարենայ դուրս ելլել նաւահանգիստէն :

— Աբանչելի մարդ մըն էք :

— Յետոյ իմ հինգ գլխաւոր գործակալներս ընկերներու հետ այս գիշեր պիտի խուզարկեն բաղաբին և արուարձաններուն բոլոր որջերը : Այն ժամուան մէջ, թի—բաւները թող չպիտի տան որ կասկածելի մարդիկ շրջագային :

Չինաստանի մէջ թի—բաւները գիշերապահներն են :

Ամեն փողոց իր գիշերապահն ունի, որ միշտ նոյնն է, այնպէս որ այդ մարդիկը թէ՛ անուամբ և թէ՛ անձով կը ճանչնան այն թաղին բնակիչները որոց վրայ հսկելու պաշտօն ունին :

Մէկ դժբախտութիւն կայ այս հանձարեղ կազմակերպութեան մէջ որ անյաղթելի արգելք մը ըլլալու էր

չարագործներուն համար, սա է թէ այս հսկողներ կը պտտին զարնելով փայտէ գլանի մը վրայ որ ճրճարկի նման ձայն մը կը հանէ, և վառած լապտեր մը կրեն իրենց մէջքը : Ասկից կը հետեւի թէ գողերը, լսելով և տեսնելով զանոնք հեռուէն, բնականաբար կրնան առանց վտանգի ձեռնարկել իրենց գործին :

— Մինակ, շարունակեց ֆո—Հօբ, մարդասպանին նկարագիրը պէտք է ինծի :

— Իրաւ է : Ես որ ամենեւին չհարցուցի ատիկա, պատասխանեց Մէնկ միամտութեամբ : Տիկինը պիտի ըսէ :

Սոլ—Պրոտէի մայրը փութաց անանկ մանրամասն մէկ նկարագիրն ընել Չուի որ ազնիւ դատաւորը չկրնալով ինքզինքը զսպել գոչեց :

— Հաղար հոգիի մէջէ պիտի ճանչնամ այդ հըրէշը :

Խօսքն ընդմիջեցաւ երբ ներս մտան վերատեսչին կանչած ոստիկանները :

Սա՛ խնդիրը բացատրեց անոնց և յոյժ մանրադնին հրահանգներ տալէ յետոյ անոնց, պիտի ճամբէր զանոնք երբ գատաւորը որ իր ստորակարգ եաշներուն գիմացը վերստացած էր իր բոլոր պաղարիւնը, խիստ ձայնով ըսաւ .

(Շարունակելի)

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ կը ծախուին :

Լուսինեան Իշխան — Ֆրանսահայ Բաւարան, գին 25 ֆր. ուկեգրամ. Պուլկարահայ վարժարանաց համար 20 ֆրանք :

Թ. Գ. Հինտլեան — Տեառական և գործնական Քերականութիւն Պուլկարերէն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն. 2 ուկէս ֆր.

Թապլաքեար Փիլիկ ալքօր հարսնիքը 60 սնդ.

Բարեկենդանի անկուտիները, կատակախաղ 1 արար 50 սնդ.

Մահճուպիյէթին միւքեաֆաթը, 40 ֆէտի պիր բէրաէ, 50 սնդ.

Գոգանճ գօճա.եախօտ Էնֆիլէճի, 40 ֆէտի պիր բէրաէ, 50 սնդ.